## ԺԸ. ՓՈՐՁՈՒԹԻՒՆ

Երեկոյեան մութը պատել էր արդէն, երբ ես եւ Ասլանը ձի նստելով դիմեցինք դէպի առաջնորդարանը: Ճանապարհին հարցրի Ասլանից.

— Ի՞նչ ես կարծում, առաջնորդին յայտնի՞ կը լինի մատնութիւնը:

— Անտարակոյս, — պատասխանեց նա: — Անկարելի է, որ փաշան այդ մասին նրա հետ խորհուրդ արած չլինի:

— Ուրեմն տիկնոջ զգուշացնելը իզուր չէր:

— Բոլորովին իզուր էր:

— Ինչո՞ւ: Առաջնորդը մեծ յօժարութեամբ իր սեղանի վրայ կալանաւորել կը տայ քեզ, եթէ ստուգէ, որ դու ես նկարագրուած անձը:

— Նա այդ կանէ, բայց ստուգելը դժուար է:

Տեսնելով Ասլանի անձնավստահութիւնը, ես լռեցի: Նա ինձ պատուիրեց.

— Դու այստեղի սովորութեան համեմատ կը կանգնես դռան մօտ, ներսի կողմից. աշխատիր ոչ մի բառ չփախցնել քո լսողութիւնից, ինչ որ կը խօսուի այնտեղ:

Մի խումբ ծառաներ կանգնած էին առաջնորդարանի դռանը՝ հիւրերին ընդունելու եւ նրանց ձիաները բռնելու համար: Մեզ եւս ամէն քաղաքավարութեամբ ներս տարան: Մենք սպասում էինք հանդիպել մի համեստ ընթրիքի, որպիսին վայել էր մի կրօնաւորի, բայց գտանք ընդհակառակը: Դահլիճներից մէկը փառաւոր կերպով զարդարուած էր. լուսաւորութիւնը աչք էր շլացնում. ես առաջին անգամն էի տեսնում այսպիսի ճոխութիւն: Դահլիճի պատուաւոր ճակատում, թանկագին թաւիշեայ օթոցի վրայ, որ տարածել էին պարսկական գեղեցիկ գորգի երեսին, բազմած էր նորին սրբազնութիւնը: Նրա աջ կողմը բռնել էր փաշան, իսկ ձախ կողմը՝ մի նշանաւոր քուրդ բէկ: Նա այն գիշեր հագած ունէր ծիրանեգոյն փարաջայ, իսկ կուրծքի վրայ շողշողում էր ալմաստներով զարդարուած օսմանեան շքանշանը: Ինձ յայտնի էր, ես Պարսկաստանում շատ անգամ էի տեսել, երբ երկրի կառավարիչը մարդիկ է մորթել տալիս, նա այնօր սովորաբար հագնում է արունագոյն զգեստ: Այդ ինձ մտածել տուեց, թէ նորին սրբազնութիւնը գուցէ նրա համար է հագել ծիրանագոյն փարաջան, որովհետեւ առաջնորդարանում այնօր կատարուել էր գիւղացի կնոջ նշանաւոր դատաստանը: Բայց այդ պէտք էր մի պատահական հակադիպութիւն համարել: